

ՔԱՆԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Քահանայից լսարանի առաջին հունձքը)

Հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապարտությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մաքուցվեց Ս. Պապարագ, որի ընթացքում քեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Եկեղեցում չափազանց հանդիսավոր ու փոռական մթնոլորտ էր: Քահանայական ձեռնադրություն և օծում էին ստանում 19 սարկավագներ: Նրանցից 12-ը քահանայից պատրաստման լսարանի առաջին շրջանավարտներն էին: Նրանց հետ մեկտեղ քահանայական ծառայության կոչվեցին նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտած յոթ սարկավագներ: Առաջին անգամ քահանայական ձեռնադրություն և օծում էր կատարում նաև Մայր Աթոռի դիվանապետ, նորած Ս. Արշակ եպս. Խաչատրյանը:

Քահանայից պատրաստության առաջին լսարանը բացվեց երկու փարի առաջ, Ամենայն Հայոց Հայրապետի փնօրինությամբ՝ Հայ Եկեղեցու սպասավորներ պատրաստելու նպատակով: Դիմորդները Հայաստանի փարբեր շրջաններից ժամանած բարձրագույն կրթությամբ մասնագետներ էին, որոնք իրենց ծառայությունն էին կամեցել բերել Հայաստանյայց Մայր Եկեղեցուն: Եվ ահա, երկամյա հոգևոր կրթություն ստանալուց հետո, նախկին շինարար-ճարտարագետը, ֆինանսիստը, երկրաբանը, հոգեբույժը, երաժիշկը ու մանկավարժը ստացան քահանայական կոչում:


Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կատարվեց նորընծաների ուղղափառ հավաքի հրապարակային քննություն: Խորհրդավորակները վկայեցին նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին, իսկ ընծայացուները միաբերան մերժեցին և նգովեցին հերեփիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հետևել սուրբ առաքյալների, երանաշնորհ հայրապետների ու վարդապետների հավաքին՝ ի նշան իրենց ուղղափառ դավանության արտասանելով Ս. Գրիգոր Տաթևացու հեղինակած «Հավաքամբը» և ուխտելով հավատարիմ մնալ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Կիրակի, հրնթացս Ս. Պապարագի, 19 ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ս. Խորան: Դառնալով դեպի հավաքացյալ ժողովուրդը՝ ընծայացուները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռնը, և ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Արման սրկ. Սիմոնյանը վերակոչվեց Տ. Նորայր քահանա, Արթուր սրկ. Հովհաննիսյանը՝ Տ. Արիստակես քահանա, Հովհաննես սրկ. Բաղայանը՝ Տ. Վրթանես քահանա, Արարատ սրկ. Նորիջանյանը՝ Տ. Հուսիկ քահանա, Արման սրկ. Շահնազարյանը՝ Տ. Ներսես քահանա, Միքել սրկ. Ղաիրամանյանը՝ Տ. Գյուր քահանա, Հուսիկ սրկ. Հայրապետյանը՝ Տ. Բաբկեն քահանա, Հովհաննես սրկ. Վահանյանը՝ Տ. Մուշե քահա-



ՋԵՆԱԴԱԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՊՑՈՒՄ





הרב משה שניידמן, ראש ישיבת תומכי תמימים, מברך את הילדים ביום חג המצות.

նա, Գագիկ սրկ. Բաբայանը՝ Տ. Մաշտոց քահանա, Հայկ սրկ. Պեպրոսյանը՝ Տ. Ղազար քահանա, Արթուր սրկ. Սարգսյանը՝ Տ. Սմբատ քահանա, Արթուր սրկ. Դրավանցը՝ Տ. Մարթենոս քահանա, Արայիկ սրկ. Մկրտչյանը՝ Տ. Մանուել քահանա, Վահան սրկ. Անդրեասյանը՝ Տ. Թովմաս քահանա, Կառլեն սրկ. Ղազարյանը՝ Տ. Առաքել քահանա, Վլադիմիր սրկ. Գալստյանը՝ Տ. Եզնիկ քահանա, Գառնիկ սրկ. Առաքելյանը՝ Տ. Սիմոն քահանա, Հովհաննես սրկ. Սարգսյանը՝ Տ. Փավստոս քահանա, Վաչագան սրկ. Բաբայանը՝ Տ. Անանիա քահանա: Պարարագիչ Սրբազան Հայրը նորած քահանաներին փոխանցեց նաև Հաղորդության սկիզբը՝ նրանց տալով պարարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Քահանայական օծումից հետո Սրբազան Հայրը հավոր պարջաճի բարոզ խոսեց՝ անդրադառնալով քահանայի առաքելությանը:

«Միրևի հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր բացառիկ ուրախություն է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցում, բանգի առնենք՝ հոգևոր և աշխարհական դասով, Ամենայն Հայոց Հայրապետի հովանավոր աջի օրհնության ներքո, համախմբվել ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող նվիրական և 1700-ամյակին ընծայված այս տաճարում, համախմբվել ենք կալարելու, մասնակից լինելու մեր աղոթքներով ձեռնադրության արարողությանը տասնիկը նորընծայակների: Տասնիկը անձեր, վրբեր իրենց ուսումնառությունը Գեորգյան Հոգևոր Ընդարանում և քահանայից պատրասարման լսարանում անցնելուց հետո հունձնառություն դրսևորեցին, պատրասարակամություն ունեցան լծվելու այն առաքելությանը, իրենց անձերի վրա կրելու այն կոչումը, որը ավանդվեց մեզ մեր Տեր Հիսուս Զրիարտուից և որը իրականացվեց, առաջ տարվեց մեր հայրերի կողմից:

Ահա այսօր՝ բացառիկ ուրախության այս օրն անդրադառնում եմ Տիրոջ այն խոսքերին, որն արձանագրված է Ղուկասու Ավետարանի իններորդ գլխում. «Ոչ որ արկանէ՛ ձեռն զմաճով եւ հայիցի յերս»: («Ոչ որ չի կարող ձեռքը մաճին դնել և կր նայե») (Ղուկ. Թ. 62): 17 դարեր առաջ, երբ քրիստոնեությունը պերականորեն հասարարվեց մեր երկրում, նվիրական այս հողի վրա, և 20 դարեր առաջ, երբ տակավին կոր էր քրիստոնեությունը մուրք գործել մեր աշխարհ, մեր հայրերն, արձագանքելով Տիրոջ կոչին, դրեցին իրենց ձեռքը պատրասարակամորեն այն մաճին, որը կոչվում է ծառայության մաճ, որը կոչվում է սիրտ գերակայության, ծառայության գերակայության մաճ: Ահա այսօր նվիրական այդ շրթան շարունակվում է, և 20 դար անց, երբ մեր Եկեղեցին Հայաստանի կորանկախ Հանրապետության իրողությամբ կոր շունչ և կոր զարթոնք է սարքում, վերարին այդ առաքելությանը, այդ ծառայության մաճին ձեռքներն են դնում 19 կոր ընծայալ քահանա հայրեր:

Միրևի հոգևոր եղբայրներ, ընծայացուներ, այսօր գիրեն, թե որքան հուզումնայից է տրոփում ձեր սիրտը, և ինչ իղձերով ու նվիրական սարքումներով է հորդում ձեր արյունը: Գիրեն, որքան պատրասարակամ եք, գիրեն, հուզականության ջերմ զգացումով լցված եք ձեր ծառայությունը բերելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Այս արարողության ընթացքում ընթերցեցինք աղոթք-

ներ, մաղթանքներ, որոնց նշանակությունը և առանցքը մեկն է՝ ծառայություն և անմնացորդ ծառայություն Տիրոջը և սրբազան մեր Եկեղեցուն:

Քրիստոնեությունը, քրիստոնեական ծառայությունը ծառայությունների մեջ թերևս այն միակն է, որ երկվորյուն չի հանդուրժում, միակն է, որ ասում է. «Չեք կարող երկու տերերի ծառայել» (Մատթ. Զ 24): Քրիստոս երբ Իր աշակերտներին ուղարկեց, առաքեց ծառայագործության, ասաց. «Չեզ հեկ մի վերցրեք ո՛չ զափազան և ո՛չ մախաղ, ո՛չ հաց և ո՛չ արծաթ դրամ» (Ղուկ. Թ 3): Ուրեմն և մեր՝ հոգևորականներին առաջին առաքելությունը մեր ծառայության մեջ անմնացորդ կոփրումն է մեր առաքելությանը, այն ծառայությանը, որը կոչված ենք իրականացնելու: Եվ վերադին մեր ծառայության համար անդրադարձնալով այն օրինակներին, որ Քրիստոս ավեց մեզ, հիշենք, որ երբ Քրիստոս վերադին մեկնեց դեպի Մամարիա, որտեղից այնուհետև պետք է գնար Երուսաղեմ, ցանկացավ իջևանել սամարացիներից մեկի տանը, և սակայն երբ սամարացին իմացավ, որ Քրիստոս այնուհետև պետք է մեկնի Երուսաղեմ, դռները փակեց Նրա առջև և չթողեց, որ Քրիստոս իր աշակերտների հետ օթևանի իր տանը, իր բնակարանում:

Աշակերտները, ի պատասխան արձագանքելով անմիջապես, ասացին. «Տեր, եկ՝ երկնքից հրդեհ բերենք, կրակ բերենք և այս մարդկանց հրդեհենք, որովհետև իրենք չգիտեն, թե ում առջև են դուռը փակում»: Քրիստոս սակայն պատասխատում է. «Ո՛հ, Մարդու Որդին չեկավ կորսարյան մարներու»՝ Մարդու Որդին չեկավ ավերելու, չեկավ ոչնչացնելու, այլ եկավ կառուցելու ու փրկելու: Եվ ահա երկրորդ մեր առաքելությունը, երկրորդ այն առաքելությունը, որին լծվելու եք դուք հետագայում մեր հոգևոր ծառայագործության ընթացքին, պետք է լինի ոչ թե բանդել, ոչ թե խռովություն սերմանել, այլ սեր քարոզել, կառուցել, ջերմացնել իրարից մերժված սրտերը, իրար մոտեցնել չհանդուրժող անձերին: Միայն այս է լինելու մեր առաքելությունը, սիրելի եղբայրներ, մեր ծառայագործության, մեր քահանայագործության ընթացքին:

Եզրափակելով խոսքը՝ Սրբազան Հայրն ասաց. «Եվ մաղթանքս է, որ մեր ժողովուրդը իրապես, որպես մեր կոչմանը արժանի հոգևորականների, մեզ դիմի հենց այդպես»:

Ձեռնադրությունից հետո Ս. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հայրերն ու միաբանները և, համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակարներն ու ձեռքերը, շնորհավորեցին նրանց:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կապարվեց նորած Ս. Նորայր քահանայի վեղարի փվջության և արեղայի օրհնության կարգը: